## ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՀԵՌԱԳԻՐԸ ԱՄԵՆԱՊԱՏԻՎ ՆԻԿՈԼԱՅ ՄԻՏՐՈՊՈԼԻՏԻՆ՝ ԱՍՏՎԱԾԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԴՈԿՏՈՐԻ ԱՍՏԻՃԱՆ ՍՏԱՆԱԼՈՒ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԵՎ ՆՐԱ ՊԱՏԱՍԽԱՆԸ

### ԿՐՈՒՏԻՑԿՈՒ ԵՎ ԿՈԼՈՄԵՆԱՅԻ ՄԻՏՐՈՊՈԼԻՏ ՆԻԿՈԼԱՅԻՆ

ՄՈՍԿՎԱ

Քրիստոնյաների մեջ եղբայրություն իրականացնելու և խաղաղությունը ողջ աշխարհում պահպանելու գործում Ձեր կատարած անդուլ աշխատանքի, ինչպես և Ձեր կատարած արդյունավետ գիտական-լուսավորչական և քարոզչական գործունեության համար Ձեզ աստվածաբանության դոկտորի կոչում շնորհվելու առթիվ հղում ենք Մեր շնորհավորանքները:

Մնամ Ձեզ սիրող ի Քրիստոս,

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ<br>ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ՝<br>ԳԵՈՐԳ Զ.

---

### ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԳԵՈՐԳ Զ.ԻՆ

ԷՋՄԻԱԾԻՆ

Որդիական ջերմ սիրով իմ շնորհակալություններն եմ հայտնում Ձերդ Սրբությանը՝ Ձեր սիրալիր շնորհավորանքի համար:

Խոնարհվում եմ Ձեր առաջ որդիական ջերմ սիրով:

ԿՐՈՒՏԻՑԿՈՒ ԵՎ ԿՈԼՈՄԵՆԱՅԻ ՄԻՏՐՈՊՈԼԻՏ՝<br>ՆԻԿՈԼԱՅ